

# ԲԱՇՄԱՎԵՊ

## ՀԱՅ ԳԻՍԱՐԱՆ

### ՀԱՆԴԵՍ ՈՒՍՈՒՄՆԱԿԱՆ

ԹԵՐԹ ՄԻ ԹՂԹՈՑ ՊԱՏՄՈՒԹԻՒՆԸ

#### Գ

Կորքեմպէրկ ի Մակոնցա

Ահանքն կոթէմպէրկ Սթրասպուրկէն ելլիտմ գարձաւ ՚ի Մակոնցա, յուսալով անշոշտ որ աւելի դիւրաւ կարող ըլլայ իր զործը առաջ տանիլու միջոցներն ձեռք ձգել, Հանճարեղ մարդկանց յատուկ եռանդեամբը յարատեելով վատահ մարդկոթէնան օգտակար գաղտնիք մը ձեռք ձգած ըլլայուն ստուգոթիւնանը վրայ, Սթրասպուրկի մէջ իրեն դէմ ելած ձախորդութիւններէն չվրաւ. և ծննդեան քաղաքը դառնարվէ իր նպատակին հասնելու միջոցներուն վրայ սկսաւ մտածել: Մակայն ինքիր զիսուն և միայնակ զայն առաջ տանիլու համար հարկաւոր ստակր շնոնենալով, որոշեց Յովհաննէս ֆառութ անունով մէկու մը ընկերանալ, որ ոսկերիչ և սեղանաւոր էր ՚ի Փարփիզ:

Ժամանակին ոսկերիչքը՝ մեր ատենուան նոյն անունը կրող արուեստաւորաց պէս պատուակն ակնեց լոկ վաճառականք չէին. այլ մեքենապէտ ձուլոր, որ իրենց զործարաններուն մէջ բաց ՚ի մեքենական մեծ գործերէ՝ ճարտարք էին նաև ՚ի շինութիւն մննը նիւթոց: Այսպիսի անձ մըն էր ֆառութ, հարուստ, ճարտար՝ և ոմանց աւանդածին համեմատ, նաև կարգէ գուրս շահադէտ և վաշխառու:

Աղէկ ըմբռնեց ֆառութ կոթէմպէրկի գիւտին արդիւնքը, և գուշակելով թէ մըշափ շահաւոր կրնայ ըլլալ, ընկերութիւն

դաշնագիր մը ըրաւ հետը ՚ի 1450. որով կը պարտաւոյուէր ութըհարիւր ոսկիէ փիորին վնարել անոր, վեց առ հարիւր շահով, աարուէ տարի մինչև հինգ տարի, տպագրութեան հարկաւոր գործեաց և կարասանց համար. և որոնք ֆառուսթի անունով պիտի ըլլային իբրեւ երաշխաւորութիւնը տրուած գրամին հատուցմանը. Ասէ զատ, երեքհարիւր ոսկիէ փիորին ալ պիտի տար՝ գրսէն եղած ծախքերուն համար: իսկ եթէ ընկերութիւնը լուծուէր, կրնար կոթէմպէրկ իր կահկարասիններն միայն ետ առնուլ եթէ յառաջագոյն ութ հարիւր փիորիններն և անոնց շահը վճարէր:

Հնչապէս ընթերցողը յայտնապէս կ'ըմբռունէ, բոլորովին ֆառութի շահաւոր էր այս գայնագիրը. որովհետեւ եթէ չյաջորիք՝ տպագրութեան նիւթերն բոլոր իրեն պիտի մնային և տէր պիտի ըլլայ զանոնք ուզածին պէս վաճառելու: Բայց կոթէմպէրկ իր գիտմանն հասնելու համար որ և իցէ գժուարութեան առջև չըքաւ. որովհետեւ ամէն բանէ աւելի գրամի կարօտ էր, և որ և իցէ պայմանով ալ ըլլայ հարկ էր զայն ձեռք ձգել:

Սթրասպուրկէն հետը բերեր էր այն փայտեաց գերեն՝ որոնցմով անշուշտ տպագրած էր բանի մը թիրթ այն Աստուածաշանչ գրքէն, որուն ամբողջ տպագրութիւնն փափաքած էին Ակուխսկրանայի տօնավաճառին համար հասցենել: Բայց տեսնելով թէ ձեռազրաց գեղեցկութեան և մաքրութեան հետ բազգատելով, խիստ անարուեստ էր իւր գիւտին արտագրութիւնը,

անոնցմով իր գործը յառաջ տանելու խորհութագուցք թողոցեր, և նուռազ անկատար միջոցներ կը փնտռէր, Այն ատենն էր որ մտածեց մայր գրեր ձևացըներով, անոնց վրայէն թափիլ կապարէ կամ անագէ տառեր, և այս խորհուրդը մորին մէջ արթընցեր էր Աթրասպորդիլ մէջ տեսնելով գարուես գրամահատութեան:

Աւ բոլորովին վտահ իւր գործոյն վրայ, կութէմակէրկ սկսան նոր եռանգեհամը մը աշխատիլ, և առանձին տան մը մէջ տպարան հաստատեց, և գրեթէ երկու տարի անցուց անոր հարկաւոր մամուլ, թուղթ, գրեր և ուրիշ ամէն կարեւորքն պատրաստեան. Այս ամեն ծախուց համար ֆառարէն առաջ առաջ առել Հարիւր Փիորին ծախելով, ստիպուեցաւ նոյն արուեստաւորէն ուրիշ ութօն հարիւր Փիորին ալ փոխ առնուլ, որպէս զի հարող ըլլայ գլխաւորել արդէն սկսած Աստուածաշունչ գրոց տըպագրութիւնը:

Սակայն կութէմակէրկ իսխստ յամի կը յառաջադիմէր, և այլ և այլ գժուարութիւններ զիմացը կ'ելլին, և որոնք անշուշտ յասած կու գային կապարէ կամ անգէտ տառից մամուլի տակ զշիմանալին, և կամ թերեւ նոյն իսկ մայր տառից անկատարութենին:

Ֆառութի մէկ գործաւորը՝ Շէֆէկը, իր գլխաւորաց գործը կատարելագործելու փառքը պիտի ունենար: Հանճարամիոն և գործն հետապնդն էր կութէմակէրկի և Ֆառութի արշենատին ինքանամուտ ըլլայ: Տեսաւ որ համար անոնց առջևն երած ամեն գժուարութիւններու որ անոնց պատճառը, և իր կողմանէ աշխատիլ սկսաւ: Երկար անօգուտ փորձերէ ետքը վերջապէս յաջողեցաւ, և ինքն առաջինը եղաւ որ պղնձի վրայ փորագրեց խօսքի նշանակ տառերը, և անանկով ի զլուխ հանեց տըպագրութեան առուեստա:

Ունանք կ'ըսեն թէ ինքն Շէֆէկը հնարած ըլլայ ինչուան հմաս գործածուած տպագրութեան թանարին գիւտը: Ինչուան իր տառն ի կիրառութեան եղածներն տժգոյն էին և ճերմակ: Ինք աւելի թանձր և աւելի սև գոյն տուաւ, ի գործ գնելով անշուշտ հոյանտացի Վանտիք նկարչին արուեստը, որն որ հեզինակէ կտաւատի և ընկուղի իւղովներկը իրարու խառննելուն գիւտին:

Ֆառութ այնչափ գարմացաւ այս գիւտերուն վրայ, որ Շէֆէկը ինքն ընկեր առնելով աղջիկն ալ իրեն կին տուաւ: Անկէ ետքը իրեքը միաբան սկսան արագութեամբ աշխատիլ, իրենց գիւտին գաղտնիքը պատճելու ջանալով: մինչեւ որ յայտնուե-

ցաւ իրենց գործաւորներէն, առանց որոց չին կրնար ի գործ գնել այս արուեստը: Ինչպէս ի Աթրասպուրկ՝ ասանկ ալ ի Մակոնցա չկրցաւ: Կութէմակէրկ հանդիսատ գտնելու Ընկերութեան տեսելուն համար սահմանաւուած հինգ տարիներուն մէջ ֆառուեթիւն ունեցաւ գիւտին ամեն մանր-մունք գժուարութեանց խելամուռը ըլլալու: Վաստահ Շէֆէկը հանճարեղ գործունէաւթեան վրայ, որը իրեն փեսայացուցեր էր: և վաստահ գարձեալ որ եթէ կութէմակէրկէն իր տուած ստակը պահանջնջէր, տպարանի ամէն հարկաւոր կարասեացը տէր պիտի ըլլալով իրենց դրած գանձագրին գորութեանը համար մատ, և գիտանոյդ թէ անիկամատ, ու գիտանոյդ թէ անիկամ իր դրամը վճարելու վիճակի մէջ չէ: անոր դէմ գատ բացաւ, տուած ստակը պահանջնջով: Աւստի գատաւորաց գիմաց քաշեց զինքը՝ պահանջնելով իրմէ կամ տուած ստակը, որ շահովը 2020 ոսկի փիորինի կ'ելլէր, և կամ իրեն երաշխաւորութիւնը ցցուած տպարանի վերաբերեալ ամէն նիթինը:

Այս անգամ կութէմակէրկի գելմկ'ելլին իր գաշնացիրը և գատաւորաց մէկը, որ ֆառութի ազգական էր: Պետրոս Շէֆֆէկը իրեն դէմ վիսյութիւն տուաւ: Աւստի կութէմակէրկ գատը կորսնցուց: և հարկ եղաւ որ արտասուալից աշքով տեսնէ իր աշխատանաց գործեաց իրմէ օտարանալը, որոնց համար այնչափ դրամ ծախեր և քանա տարուան յարտան աշխատութիւն ունեցեր էր: Աստուց հետ որ գատանցոյնն էր իրեն համար, հարկ էր որ կորսնցընէր այս հրաշալի արուեստին ճարտարիչն ըլլալու արժանաւոր պարձանքը:

Հնարիմացն ֆառութի առատածեռնութիւն կ'եղելով հաճեցաւ թողուկ կութէմակէրկի տպարանի կարելոր կարասեաց և գործիններու մաս մը, պայմանաւ որ շկարենա պապգրու գրերուն վրայ իր անուն զնել: պատճառ բերելով թէ ամեն ընկերը հաւասար իրաւունք ունին արդէն սկսուած գործոց և նիթիերուն վրայ: Թէպէս եաւ ծան էին այս պայմաններն, բայց կութէմակէրկ գատաստանը կորսցուցած ըլլալովն բռնադտացաւ ընդունիլ: ուստի ֆառութի իրեն ծգից հին ափերը, որոնք խօսք խոչը ըլլալու անպատճէութիւնն ունենալով, թէ տպագրութիւնը գժուարին և թէ գործագրութիւնը անկատար կ'ըլլայ:

Հին նիթիերուն հետ ձգեց նաև նաև կութէմակէրկի արդէն սկսուած և անկատար թողուած գրքերը: ինչպէս էջը երեսուն և վեց առղով Աստուածաշունչն ու կաթողիկոնը, բայց միշտ նորոգելով անոնց

վրայ անունը զնել չկարենալու պայմանը։

Ֆառաւսթ և Շէֆֆէրի իրենց ամեն այս շորհմանքն ալ աղէկ գտնեն ար կութէմպէրկ չէր կրնակ շրւտով աւարտել սկսուած զործերուն տպագրութիւնը. ուր իրենք՝ նոր գիւտերով և Շէֆֆէրի ճարտարավեան արդինք գեղեցիկ տառերով զի՞րք գերազանցելուն վրայ տարակոյս շունէին Գիտէին գարձեալ թէ իրենց ձեռքով եղած տպագրութիւններն աւելի ընդունելի պիտի ըլլան, ոչ միայն գեղեցկութեամբ այլ նաև աժան գնով։ որովհետեւ գրերը պատի էին և այն պատճառաւ քիչ թուղթ կը սպառէր, և անով կը թեթենար տպագրութեան ծախրք։

Եւ յիրափ, 1458ին Ֆառաւսթ և Շէֆֆէր տպագրեցին իրենց Աստուածաշունչը՝ ամեն մէկ իջն վրայ քառասունուերկու տողով. ինչպէս կը տեսնենք կարմրադիղով գրուած ծանօթութեան մը մէջ դոր կը կարդանք Փարիզու ազգային մատենադարանին մէջ եղած օրինակին վերջը. «Այս գիրքը, կ'ըսէ ծանօթարարը, նկարակերտուած և կազմուած է 'ի Հենրիկոսէ Գրեմէր' յամի տեառն 1456, սուրբ Կուսին վերափոխման օրը» ։ Կենսագիրներէն ոմանք այս Աստուածաշունչ գրոց մէջ տպագրովի անուն չգտնելով կութէմպէրկի համարեցան զայն, սակայն ոչ ստուգութեամբ. որովհետեւ տառերը նման են Սաղմոսաց գրքին զոր հետեւեալ տարւոյն մէջ իրենց անունով հրատարակեցին Ֆառաւսթ և Շէֆֆէր 'ի Մակոնցա : Աստուածաշունչին վրայ անուննին չդնելուն պատճառն էր՝ որովհետեւ կ'ուզէին իրեր ձեռագիր վաճառել զայն բարձր գնով. ինչպէս յաջողեցան ալ առջի բերան։

Ասանքով կութէմպէրկ տպագրական արուեստին գտիչ ըլլալու պարծանքէն զըրկուեցաւ, ինչպէս իրմէ քիչ տարի ետքը նոյն բաղդին պիտի հանդիպէր Վրիստավագործ Գորոմակոս՝ նոր աշխարհէն Երևանութիւնովն. Ասկայն կութէմպէրկ սովորական մարդու գասէն չէր. Վնասուի պէս ամեն մէկ հարուածէն ետքը՝ կարծես թէ աւելի ոյժ կ'առնուր. Նորէն Տառէ եղաւ և իրեն դրամական ձեռնատուութիւն ընող մարդ հնտուեց. և բարերազդաբար այս անդամ յաջողեցաւ ճշմարիտ պաշտպան մը գտնել զկոնրագ Հումերի, որ Մակոնցայի քաղաքապետ էր. Այս առատամեռն մարդը իր տուած դրամոց երաշխաւորութիւն զայն միայն պահանջեց որ կութէմպէրկ եթէ իր պարտքը շնչարած մեռնի, տպագրութեան ամեն նիւթերն իրեն թողու։

Այսպիսի սլաշտպանութեամբ կրցաւ

կութէմպէրկ Մակոնցայի մէջ այնախիս տպարան մը հաստատել որ նախանձորդ ըլլայ ֆառաւսթի և Շէֆֆէրի. Այն տպարանին մէջ գլխաւորեց Աստուածաշունչ գիրքը՝ որ առջններուն տպագրածէն քիչ ետքը հրատարակուեցաւ. Աչ թուական և ոչ անուն ունի այս գիրքը. ինչպէս և ոչ կաթողիկոնը որ 1468ին աւարտեցաւ։

Որովհետեւ ըսմինք թէ Շէֆֆէրի և Ֆառաւսթի տպագրած Աստուածաշունչ գիրքը յառաջադպոյն հրատարակուեցաւ, ուստի առաջին գիրքը իրենց տպարանէն ելած կ'ըլլայ. սակայն 1459 թուականը կրող գրութիւն մը կը հաւատարամցընէ թէ կութէմպէրկ այն տարիէն առաջ և այլ հոգեարակն ըրոց տպագրութիւնն ըրած ըլլայ, որ չեն հասած մինչեւ մենք. Այս գրութածով՝ կութէմպէրկ Մակոնցայի ըլլարուհոյն Գլարայի վանքին — ուր առանձնացեր էր իր քոյրը, — կ'ընծայէ արդէն տպագրած ամեն գրքերը, և զոր դեռ կրնայ հրատարակեց. Կրանդեամբ աշխատեցաւ կութէմպէրկ 1458էն մինչեւ 'ի 1462. և այն միջոցին մէջ բաց 'ի Կոստուածաշունչն և կաթողիկոնէն հրատարակեց այլ և այլ գրքեր. ինչպէս Ճառ յարդար մատուցման տպարագիր, Թովման Աղոյինացի, և այլն. իրեն մամանկակիցներէն մէկ կ'ըսէ թէ օրը ինչուան երերէարիւր թերթ կը տպէր, և որ այն ատենին համար շատ բան էր։

1462ին երբոր քաղաքական պատերազմ բացուեցաւ իգնէնապէրկի Ծիկչեր և Դասաւի Ասողի իշխան արքեպիսկոպոսաց մէջ, առնուեցաւ և աւարեցաւ Մակոնցա. և ինչպէս ընական է թէ կութէմպէրկի և թէ իր նախանձորդաց տպարաններն ալ մեծապէս վասուեցան. և երկու գործարանաց մէջ աշխատողք և իրենց հացը գտնողք՝ բռնադատուեցան ցրուիլ. որով երկու կամ երեք տարուան միջոցի մէջ ամեններն նոր գիրք մը չհրատարակուեցաւ։

Ֆառաւսթ և Շէֆֆէր 'որովհետեւ հարուած էին, կրցան հետեւեալ գարմանել իրենց վասուաց. բայց կութէմպէրկի յոյնած' և այս անհաւատար կութէն և ուրիշ տըհաճութիւններէն ձանձրացած, բոլորովին թողուց տպագրութիւնը. Ասկայն ամեն կրած վատերովն ալ քաղաքացւոց գիմաց յարգի ու սիրելի եղաւ միշտ իր աշխատանքովն և անհամեմատ գործունէութեամբն. Աստուած ալ ուստի յոյսն ամեններն կտրած չէր, իրեն օգնութիւնը չուշացուց. վասն զի Մակոնցայի Կայսրունտիր արքեպիսկոպոսն Ատոլի իր հակառակորդին յաղթելով զկութէմպէրկ իր արքունաց աղնուականներուն դասակարգին

մէջ մտուց ՚ի 1465, մարդկութեան համար բրած օգտակար ծառայութիւններն ուղելով անսանկ վարձատրել:

Դժբաղդաքար կութեմակէրկ չկրցաւ երկար վայելել այս հանդիստ վիճակը. վասն զի երեք տարիէն ետքը մեռաւ ՚ի Մակոնցա եօթանասունուրիեր տարուան հասակին. ու իր տպարանին մօտ եղող Փրանկիսկեան կրօնաւորաց վանքին մէջ թաղուհցաւ, ուրանպանց քար մը՝ տպագրութեան արուեստ գտնողին անունը կը յիշեցնէր: Բայց մեր գարուն երկու պղնձի արձաններ կանգնուեցան իրեն պատուոյն. մին ՚ի Մակոնցա ՚ի 1857, որ հռչակաւորն իրոքայտսենի հրաշակերութ կրնայ սեպուիլ. և միւն ՚ի Սթրասպուրկ ՚ի 1860, գործ Դասիթ տ' Անձէ գաղղիացւոյն: Բայց ասոնցմէ շատ աւելի տեսական յիշատակարան մըն է Հնարած հրաշալի գիւտը. յափտենական յիշատակարան մը՝ զոր ոչ ապերախտութիւն և ոչ ժամանակ երեք կարող պիտի ըլլան տապալել:

## Դ

, Յովհաննէս Ֆառար և Շեֆէր

Ֆառուսթ և Շէֆֆէր՝ կութեմակէրկի գործը շարունակելով, մեծ կաարելագործութեան հաստոցին. որովհետեւ իրենց ըրած տպագրութիւններն շատ աւելի գեղեցիկ, մաքուր ու կանոնաւոր են: 1457էն ՚ի վեր լստին ժամագիրը մը հրատարակած էին որ ընդհանրապէս Սաղմոսարան Մակոնցայի կը կոչուէր, և նորածին տպագրութեան յիշատակարան նշանաւոր. գրասէրը 250 հազար Փրանկէն աւելի զին կը զնեն վրան, և որ իր փառաւորութեամբն ու գեղեցիկութեամբ յայտնի կը ցուցնէ թէ մըսափ արագարայլ բարգաւաճան ունեցեր է տպագրութեան արուեստը: Իրենց այս յաջողութիւնը տեսնելով, ամեն ջանք ըրին կութեմզէրկէն վերցնելու տպագրութեան գտիչ ըլլալուն իրաւունքը, և գրոշմած ամեն գրքերուն մէջ իրենց սկսան սեպհականել զայն:

Հետեւ եալ դէսրին մէջ յայտնապէս կը նկատուի Ֆառուսթի թէ գործունեայ և թէ ոչ այնչափ խղճմիտ հոգին: Ժամանակացաց դժբանութեամբն ուղելով շացիլ, Ֆառուսթ և Շէֆֆէր՝ ինչպէս քիչ մը յառաջ յիշատակեցինք, սկսան իրենց տպագրեալ օրինակներն ձեռագրի տեղ վաճառել,

գէթ քանի մը տարուան համար իրենց ճարտարութեան արգասիքը քովելնին ապահովել: Բայց քիչ ատենէն այն օրինակներուն իրարու հետ նմանութիւնը, և գործաւորաց անզգուշութիւնը գաղտնիքը յայտնեց: Ոյն ատեն Ֆառուսթ իմանալով թէ անկարելի պիտի ըլլայ բուն ձեռագրաց տեղ կրլեցնել իր տպած գրքերը, հետո բաղմաթիւ օրինակներ առնելով Մակոնցայի հոչակաւոր Աստուածածունչէն, որոց վրայ ոչ անուն և ոչ թուական դրուած էր, գնաց ՚ի Փարազի, ուր նոր գիւտին համարաց գետ կասած չէր:

Առի թերաններն յաջորդցաւ Ֆառուսթի իրեն Հնարածիութիւնը. վասն զի կրցաւ իրեւ ձեռագրի անոնցմէ այլ և այլ օրինակ վաճառել վաթսուն թագակիր վահանաւորոց ստակի՞ որ հմանաւուն արթէքով գրեթէ ԿԸՈ Փրանկ կընէ. ետքը սկսաւ վաճառել յիսուն, քառասուն և ինչուան երեսուն թագակիր: Աստուածածունչ գրոց այսչափ բաղմութիւն մը և անոնց գիներուն այսպիսի փոփոխութիւն մը՝ սկսաւ ամենուն մորին մէջ տարակոյս արթնցընել. և օրինակներն իրարու բաղդատելով տեսան անոնց բորդուովին իրարու նմանութիւնը ինչուան նաև վրիպակներու մէջ. և որովհետեւ գրագրաց ընդօրինակուուց և գրավաճառաց շահուն կը գացէր, նախանձորդութեան ազգող ամենայն մատղի փութովն և ատենութեամբ քննեցին այն գրքերը: Բայց որովհետեւ չէին կրնար հասկընալ թէ ինչ կերպով այնչափ իրարու համար անծանօթ էին այն միջոցներն, ուստի կախարդութեան հետեւանք և արգասիք ենթարկեցին և հրատարակեցին:

Ֆառուսթի դէմ կասկածանք, գանգատներ և ամբաստանութիւնը սկսան յաճախել. և տանը մէջ խուզարկութիւն ընելով, բազմաթիւ օրինակիք գտնուեցան գրքոց: Որոց այլ և այլ էջերն զարգարուած ըլլալով կարմրագեղողի ըսին թէ իր արունուիք զանոնք ներկեր է. ուստի իրբեւ մոգութեան հետեւով՝ բանտ գնել տուին զֆառուսթ: Բայց Լուկովիկոս ԺԱ թագաւորը աղաստութիւն տուաւ անոր, պայման գնելով որ մի և նայն զիրք այսչափ օրինակ բազմացնելուն գաղտնիքը գրուցէ: Զիգիտոցուիք թէ Ֆառուսթ կահանքը իրալըսելու համար յանձն առեր է թէ չէ այն պայմանը. բայց հաւանական կ'ներկնայ թէ յանձն

առած ըլլայ յայտնելու։ Սակայն չկրցաւ դառնալ ՚ի Մակոնցա, ժանտամահէ մեռնկով ՚ի Փարփղ յամի ԱհՅ։

Ֆառաթի անոնը կրող վերջին տպագրութիւնը 1465ին եղած է, իսկ 1477էն ետք իրենց տպարանէն եղած գրքերը լոկ Շեֆփէրի անուամբն են. որ յերկարակեաց ըլլալով քան զկութեամպէրկ և զֆառութ, շարունակեց իր տպագրութիւններն օր օրուան քրայ աւելի հոչակ ստանալով։ Բայց ուղելով ուրուսիթի յշատակն ալ մեծարել, գիւտին պատին իրեն ալ կուտար միշտ հրատարակած գրոցը մէջ, և զոր շարունակեցին իրեն ժառանգքն ալ. և առանկով կուղէին մոռացութեան մէջ թաղել կութէմպէրկի անոնը և իրաւացի պարծանքը, Ապագայ գարք ճանչցան այն նեճ-դագործ խաբէւթիւնը։

» Ընդունայն տեղ, — կըսէ Տիտոյ, Ֆառաթի ի ինսայն և որդիքը ուղեցին յարժաշակել կութեամբ իրաւունքն և Ֆառաթի ինծայել. վասն զի նոյն իսկ Պետրոս Շեֆփէրի և Ֆառաթի թուանց Ցովհաննես Շեֆփէրայ մի անգամ տուած վըկայութիւնը բաւական է ոչնչացնելու ինչ որ իրենք տպած ամեն գրքերնուն մէջ ջանացին հաւատարմացնել։ Վասն զի Ցովհաննէս Շեֆփէր՝ Տիտոս Լիիրոսի պատմագրութեան գերմանական թարգմանութեանը մէջ զոր Մարտիմիանոս Կայսեր ընդայած է, տարածամ ամեն դրբերնուն մէջ ջանացին վկայութիւն կու տայ թէ 1451ին համարարութեաս Ցովհաննու Կութեմպէրկայ ձևորով գտնուեցաւ ՚ի Մակոնցա տպագրութեան հրաշալի գիւտը, և որ եաբը կատարելագործուեցաւ ու ամեն տեղ տուրածուեցաւ Ֆառաթի և Շեֆփէրայ գրամագլուխներով։ Աշխատանքով։

Ասէ աւելի հաւատարիմ և փառաւոր վկայութիւն մը չիկրնար ըլլայ և որուն թուականն է 1505. այնպիսի ժամանակ մը՝ յորում գեռ վկայի կենդանի էին. և որուն ոյժը իրելք չպակսիր, թէպէտե քիչ ատենէն նոյն իրեն Շեֆփէր հակառակը տպագրած ըլլայ ուրիշ գրքերուն մէջ։

## Ե

Տպագրութեան Տարալիլ յերոպա

Երբ կութեմպէրկ և Ֆառաթ Մակոնցայի մէջ առաջին գրոց տպագրութեանը կը դրագէին, Ցովհաննէս Մէնտէլէն անունով Մթրասպուրկի քաղաքացի մը՝ որուն միաբը բացուեր էր Կութեմպէրկի դէմ

բացուած գտատատանէն, և բատ ոմանց նաև անոր աշխատակիցներէն մէկն էր, առանձին սկսաւ տպագրութեան գիւտին զրաղի ՚ի Մթրասպուրկի իրեն բնծայուած առաջին զիրն է գերմանաներէն Աստուածաշունչ մը, կարմրագեղով և զարդագիր եղած ՚ի 1466, և մինչեւ իր մահուանը տարին 1471, գոթական մանր տառերով այլ և այլ գրքեր տպագրեց, և մեծ հարաստութիւն մեռ գերմանական գիւտ ուղեցուած կարանգացը։

Իր տպագրած գրքերն ոչ թուական և ոչ անուն ունին. իսկ զրոնց վրայ հրատարակով անուն կը գտննիք՝ պարզպահէ այս կերպով գրուած է. և ի ձեռն Ցովհաննու Մէնտէլէն. որ Joannem Mentelin. ոչ երբէք ուղելով տպագրութեան գիւտին պարծանքը իրեն յատկացնել. Բայց ատեն անցնելէն ետքը իր քեռորդին Ակոս օրինակ առնելով Ֆառուսիէն ու Շեֆփէրէն, այն գիւտն ուղեց իր ազգագուածին տպագրութիւն։

1472ին ատեններն ՚ի Մակոնցա հանդիպած խոռովութեանց և յուզմանց պատճառաւ, շատ տպարանի գործաւորք իրենց հայրնիքէն գաղթիլ բռնադատուելով, Եւրոպայի այլ և այլ քաղաքաց մէջ տարածեցին իրենց արուեստը։ Ուլիփի Գիլլ կութեմպէրկի գործաւորքն ու աշակերտը բնուկութիւնի հաստատեց, և հոն 1465ին Պիոս Բ. քահանայացաքատին մէկ կոնդակը տպագրեց, Անտոն Գուրուրէկը տըպագրած մը դրաւ ՚ի Նուրիմիմպէրկ նոյն ատեններն, և մինչեւ ՚ի 1513 բազմամթիւ գըրքեր հրատարակեց։ Նուրիմիմպէրկի տպագրուած մէկն էր նաև Ալբերտ Տուրէր, որուն անունովն են այլ և այլ փայտափոր զարգերով հրատարակուած գրքեր. և որոնց առաջնին թուականն է 1498.

Գոնրատ Շուայնչէյմ և Անդրյան Փանարց ՚ի Սուպիկակոյ Հռովմայ նախկին տպարան մը հաստատելով հոն հրատարակուեցաւ Լակտանտիոս մը ՚ի 1465, և սրբոյն Արքուածին բաղադրային Աստուածոյ գիրքը, երկուքն ալ բնտիր տպագրութիւնք. ու յաջորդ տարիներուն մէջ ալ մինչեւ ՚ի 1471 հին օրինակագրաց և եկեղեցւոյ սուրբ Հարց այլ և այլ գրքերը։ Այս կարգէ գուրս գործանէկութեամբն յուսացած օգուտնին չտեսնելով, բռնադատուեցան աշերսագրով մը Քինստոս Դ. քահանայացեամբէն գիրքներ օգնութիւն խնդրել. և կըսէին թէ զիրք գրքի վրայ տպագրելու եռանդնին զիրենք օրուան հացին կարօտ ձգեց։

Գրեթէ նոյն ատեններն հաստատուեցան և ՚ի Վինետիկ գերմանական տպա-

բանք, Յովկաննէս Ափիրացի 1469ին ծերակուտէն շնորհագրի մը ինդդրեց և ստացաւ որ կարող ըլլաց ինքն միայնակ տպարան բանեցընել բազարին մէջ: Վենետիկոյ տպագրողք առաջին հեղան որ գոթացի տառերը ձգելով, սկսուն հռովմէտականները գործածել: և իրենց հրատարակութիւններն այնչափ ընդունելի եղան որ ուրիշ քաղաքաց տպագրողք ուղելով ընդունելի ընկը իրենց առաջրութիւններն, վենետիկոյ գրերով տպուած ըլլալը ծանուցաննելը միայն բաւական կը սեպէին:

1490ին Ալլոյ հոչակաւոր գերգաստանին անուանի գլուխն եկաւ բնակեցաւ ՚ի Վենետիկ, և որոր ետքը այնչափ մեծամեծ ծառայութիւններն մատուցին մատենագրութեանն և տպագրութեան:

Քիչ ետքը Զուիցերի ալ մոտաւ այս արուեստը. 1470ին Հէկի ՚ի Պերոմիւնսթէր՝ որ Լուչնենայի վիճակին մէջ է, շատ կրօնական գրքեր տպագրեց: Ֆրուպէն Երասմոսի և Մուլպէյնի բարեկամը՝ Փաղիէայի մէջ նոր կառակարանի առաջին յոււնական տպագրութիւնն ըրաւ ՚ի 1516: ու յաջորդարին ալ լատինական թարգմանութիւնն ուր տպագրութիւն մը ընկելով Աւեն Ժքահանայապետին ընծայեց: Ասոնցմէ զատորին բարձապատիկ և ուղղագիր տպագրութիւնները ըրած է:

1472ին առաջին գիրքն հրատարակուեցաւ յԱլլոյ Ստորին գաւառաց. ետքն ալ յԱլլոյթ, ՚ի Լովանին և ՚ի Պիրիսուէ. ՚ի Հովանոսա ալ՝ ուր Զուիցերացիր իշխեցին ՚ի 1616 յ1680, մտուցն տպագրութեան արուեստը, և այս այնպիսի կատարելութեամբ՝ որ մինչեւ կիմա մեծապէս յարգի են և փնտուած:

Խտայիայէ ու Գաղղիայէ քանի մը տարի ետքը մտաւ նաև յԱլլոյիա արուեստն արպագրութեան, ուր ՚ի Գոլանիոյ մտցընովն եղաւ Ուկիլում Գէրսթըն վաճառականն, այս քաղաքն ըրած ճանապարհորդութենէն գանանալէն ետքը: Ռէւմինսթիր մէջ հրատարակուեցաւ առաջին գիրքն, ՚ի 1474, քաղցիարենէ թարգմանուած, սատրինջ խաղին վարդապետութիւնը Ավինչէ ՚ի 1491, յորում հանդիպեցաւ իր մահը, գաղղիարենէ այլ և այլ գրքեր թարգմանեց ու տըպագրեց, և որոնք ընդհանրապէս ասպետական վիպասանութիւնն էին: Խիստ սակաւագիւտ են կիմա այն գրքերը, ու բարձր գնով կը վաճառուին յԱլլոյիա, գոթացի բանութիւնը տպուած կամար այն հաշակուութեանը բարձրացնելուն մէջ գրեթէ վերջններէն է: Վասիլին տըպարանը հաստատուեցաւ, ՚ի Վահենսինա, յամի 1475: Հետեւեալ տարւոյն մէջ ՚ի Սիւլիիա, տասը տարիէն վերջը ՚ի Սլավանք և ՚ի Թողեայ, իսկ ՚ի Մատրիտ յամին 1493: Վիմեննէն ծիրանաւորն տարան մը բանալ առաւ յԱվելայա՝ յամի 1513, հոն հրատարակել տապու համար այն հաշակուութեանը բարձրացնելուն յԱլլոյիա առուն ճեռք զարիկը էր կիւտոն ժ քահանա, յապետին խրախուսանօրը: Այս գիրքը որ միածալ ե մեծ հաստորներէ կը ձեւանայ, յիսուն հազար ոսկի թափեաէն աւելի արժած է: և տպագրութիւնը ծիրանաւորին մահունէն ետքը լմընցաւ:

Հայկական տպագրութեանց սկզբնաւորութիւնը՝ արքէն ծանօթ է մեր ընթերցուած:

Որ և իցէ երկրի մէջ տպագրութիւնն յայտնի նշանակ մըն էր աշխարհին քաղաքականութեանը, և կրնանը ըսեթի մարդկային հանճարյն պատուին թիւն կրեն գրագրութեանը մէջ իրեւ ՚ի պատկերի կը նկատուի: Գերմանիան տպուած առաջին գրքերը աստուածաբանութեան և զպրոցական ոնդյուն կը վերաբերին, ուր ՚ի Փարիզ հրատարակուածներն՝ աստուածաբանականին հետ հաւասար կը մեծարեն զին մատենաց գրութիւն. յիստալիք ուր որ հռովմէական դպրութեանց յիշատակը մեծ ազգեց քրութիւնը բողոքաց էր, տպագրողը նախամեծատ կը սեպէն հին մատենագրութեան անուանի գրուածներն, և ՚ի Հռովմէ բահանայապետք քանուսու Եշ և կիւտոն ժ Վատիկանի հոչակաւոր տպարանը կը հաստատէն, և հոնկէ կը հրատարակուին սրբոց հարց գրքերը և Աստուածաշունչ մատեանք. յԱնգղիա՝ ասպետական վիպասանութեանց սէրք տիրացած կը տեսնենք. և անով է որ Գերբերնի ճեռքով հրատարակուուած վաթիւնուներէու գրոց մէջ տասը միայն աստուածաբանական ուսմանց կը վերաբերին, իսկ մնացածներն կամ վէտիկու, և կամ վիպանման պատմութիւններու: իսկ մեր ասենը՝ միլիոնաւոր թուով տարուէ տարիի աստուածաշունչը կը հրատարակուին յԱլլոյիա, գրեթէ աշխարհիս բոլոր լնուցներու:

Սպանիա՝ Եւրոպայի մէջ առաջին երկիրն ըլլալով՝ ուր թուութի գիւտը հնարուեցաւ, տպագրութեան բարիքը վայելողներուն մէջ գրեթէ վերջններէն է: Վասիլին տըպարանը հաստատուեցաւ, ՚ի Վահենսինա, յամի 1475: Հետեւեալ տարւոյն մէջ ՚ի Սիւլիիա, տասը տարիէն վերջը ՚ի Սլավանք և ՚ի Թողեայ, իսկ ՚ի Մատրիտ յամին 1493: Վիմեննէն ծիրանաւորն տարան մը բանալ առաւ յԱվելայա՝ յամի 1513, հոն հրատարակել տապու համար այն հաշակուութեանը բարձրացնելունը՝ որուն ճեռք զարիկը էր կիւտոն ժ քահանա, յապետին խրախուսանօրը: Այս գիրքը որ միածալ ե մեծ հաստորներէ կը ձեւանայ, յիսուն հազար ոսկի թափեաէն աւելի արժած է: և տպագրութիւնը ծիրանաւորին մահունէն ետքը լմընցաւ:

Հայկական տպագրութեանց սկզբնաւորութիւնը՝ արքէն ծանօթ է մեր ընթերցուած: